

որովհետև ան ժառանգ նշանակում էր Պարբուքին», այսինքն իր հօրմէն: Իրապէս Պարբուքի մահը տեղի ունեցաւ Յունիս 20ին, Ուրբաթ, կէսդիշերէնէն ետք, մինչ իր տղան՝ Փարաճ՝ դահ բարձրացաւ առաւօտուն:

Վասիլ Մարաջախտ կը գրէ. «Եւ է թիւն հայոց ՊԽԸ (1399) ի յունիս Ի (20), ուրբաթ վաղջանեցաւ սուրտանն ու թագեցին ի Մարա ճամբահն, ի Խուպէթ Նասրին գիհն». Թաղրի Պիրտի կը վկայէ որ «Ան թագուեցաւ ուր որ ան (Պարբուք) ցոյց տուած էր, բաց ճանապարհին քով, որովհետև այն ատեն հոն պատ չկար» (Ա. էջ 172): Մարաջախտը կը շարունակէ ըսելով «ու գրին մեծ պարոն զՕթամիշն»: Ասով պէտք է հասկնալ թէ մեծ էմիրը եւ ընդհանուր հրամանատար բանակներու էյթամիշ ալ-Պայասի խնամակալ կարգուեցաւ նորընտիր Սուլթան Փարաճի:

Վասիլ կը շարունակէ. «Կեցաւ Դ (4) ամիս, ու Այշպակն ժողկեց զշարքաշ պարոնայքն, ու բաշխեցին Պարխուխի որդին, ու հանին զՕթամիշն ի Ստապէն»: Թաղրի Պիրտի բնական է, աւելի մանրամասն կը պատմէ ու կը պարզէ Վասիլի անտրոշութիւնները: Ըստ իրեն, Փարաճի սուլթան նստեցուիէ ետք, էյթամիշ իր կահն ու կարասին կ'ուղարկէ Շղթայի Դրան Արքունի Ախտանոցը բնակութիւն հաստատելու համար, սակայն ձիաւորներու մեծ էմիրը Սէյիխտի Սուլթուն, որ ազգական էր Պարբուքի, ետ կը գրկէ էյթամիշի կահ ու կարասին եւ թոյլ չի տար որ ան հոն հաստատուի, ուր արդէն ինք կը բնակէր: Սակայն Յունիս 23ին կարելի կ'ըլլայ էյթամիշը Արքունի Ախտանոցը հաստատել: Այս Արքունի Ախտանոցն է որ Վասիլ լատիներէն «Ստապլ» (staple) կը կոչէ:

Վասիլի յիշած Այշպակն Եաշպակ՝ ալ-Շապանին է, որ Նոյեմբեր 9-10ին (1399) էյթամիշի ապստամբութեան դէմ ելաւ եւ սուլթան Փարաճի կողմը բռնեց, որուն միացան չերքէզ (Վասիլի զշարքաշ պարոնայքն) մամուլները եւ էյթամիշը

պարտութեան մասնեցին, որ փախաւ Արքունի Ախտը եւ Գահիրէն լքելով դնաց դէպի Սիւրիա:

Վասիլ կը շարունակէ ըսելով. «Յետեւ Ժ (աւուր) հեծաւ Օթամիշն...» ըսելով որ Սրբունի Ախտանոցէն էյթամիշի հանուելէն ետք: Սակայն էյթամիշ Նոյեմբեր 6ին հեռացաւ Արքունի Ախտանոցէն եւ ապստամբութիւնը տեղի ունեցաւ Նոյեմբեր 9ին ու էյթամիշ պարտուեցաւ ու Սիւրիա փախաւ Նոյեմբեր 10ին. որով Վասիլի ըսածին պէս էյթամիշի Ախտանոցէն ելլելէն «Ժ (10) աւուր ետք» չէր որ էյթամիշ փախաւ, այլ լոկ հինգ օր ետք: էյթամիշի հետ փախան իրեն ապստամբակիցներ, բայտ Վասիլի «Թաղրիուէրտին ու Ֆէրիսն ու Արզունչայն ու Ալուպչայն ու այլ պարոնայք գիշերով, ու խանկրուեցան ու փախան, ու զնացին ի Դամասկոս, առ Դէնուսն»:

Շահեկան է Վասիլի տուած իմաստը զորձածուած ծանօթ հայերէն բառերու. «Հեծաւ Օթամիշն» որոշ կերպով ապրտամբեցաւ կը նշանակէ հոս, իսկ «խանկրուեցան» պարտուեցան (խանգարուեցան) նշանակութիւնը ստացած կ'երեւի:

էյթամիշի ապստամբ եւ իրեն հետ փախած ընկերները կը կոչուին Թաղրիուէրտի բայտ Վասիլի, որ զէնքերու էմիրը Թաղրի Պիրտի մին Պաշպուղա ալ-Չահիրին է, թուրք ծագումով եւ հայրը Թաղրի Պիրտի պատմադրին: Վասիլի Ֆէրիսն սուլթանական մեծ սենեկապետ Փարխալ-Անաճ ալ-Քահիրին. Արզունչայն խորհրդականներու էմիրը Արզուն Շահ ալ-Պէյթամուրի ալ-Չահիրին է, իսկ Ալուպչայն՝ սուլթանին երկրորդ սենեկապետ Եապուպ Շահն է: Իսկ Վասիլի Դէնուսն Դամասկոսի փոխարքայ էմիրը Թանամ ալ-Հասանին է:

Արզարեւ էմիրը Թանամ ալ-Հասանի ապստամբած էր Գահիրէի Սուլթանին դէմ եւ իր ապստամբ իշխանութիւնը կը տարածէր Դամասկոսի շրջակաները, երբ էյթամիշ եւ իր փախտական ընկերները միացան իրեն ի Դամասկոս:

Վասիլ կը պատմէ. «Ու սուրտանն զնաց